

Անահիտ ՄԱԿԱՐՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական
լեզվահասարակագիտական համալսարան

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒՅԹԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
Ձ. ՖԱՌԻԼՁԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՈՃՈՒՄ
(«Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի հիման վրա)

Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել «ազատություն» հասկացության առկայացման միջոցները Ձ. Ֆաուլզի հեղինակային ոճում՝ «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի վերլուծության միջոցով: Վերոնշյալ ստեղծագործության լեզվաոճական քննությունը հնարավորություն է տալիս առանձնացնել պատկերավորման մի շարք միջոցներ, այլաբերություններ, հեղինակային դիպվածային բառեր՝ կապված «ազատություն» հասկացության հետ, որոնք նպաստում են հեղինակային ոճի առանձնահատկությունների վերհանմանը: Տվյալ ստեղծագործության մեջ Ֆաուլզը զարգացնում է «անհատական ազատության» գաղափարը՝ արտակա և ներակա լեզվական տարբեր միջոցներով պատկերելով «ազատության» յուրովի ընկալումն ու մեկնաբանումը:

Բանալի բառեր. հեղինակային ոճ, գուգորդական-իմաստային դաշտ, հասկացույթ, պատկերավորման միջոցներ, հեղինակային դիպվածային բառեր, անհատական ազատություն, վիկտորյանական դարաշրջան

Հեղինակային ոճի գաղափարը ուսումնասիրությունների առարկա է դարձել դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսին և ներկայումս նույնպես գտնվում է լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Սակայն ժամանակակից լեզվաբանության մեջ չկա հեղինակային ոճը նկարագրող մեկ համընդհանուր մոտեցում. տարբեր լեզվաբաններ իրենց տեսակետը և մոտեցումներն են առաջարկում հեղինակային ոճի վերաբերյալ: Վերջինս հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռուս լեզվաբանների շրջանակներում, և դրան նվիրված են մի շարք աշխատություններ:

Ըստ Գ. Մ. Պոցեպնիայի՝ աշխարհի հեղինակային պատկերի բառային առկայացումը գրական ստեղծագործության մեջ լեզվի գեղագիտական գործառույթի արտացոլման միջոց է /Поцепня, 1997: 251/:

Հեղինակային ոճը փոխկապակցված լեզվական միավորների բարդ համակարգ է, որն էլ հենց ձևավորում է հեղինակի գեղարվեստական աշխարհը /Некрасова, 1991: 123/:

Հեղինակային ոճ ասելով հասկանում են՝ «անհատական ոճ, որը միջոց է խոսքային ակտի կամ գրական ստեղծագործության ձևավորման համար՝ լեզվական միավորների անհատական և համակցված ընտրության միջոցով» /Ярцева, 2000: 494/:

Միևնույն ժամանակ Ն. Ս. Բոլտոնովան նշում է, որ «հեղինակի ստեղծագործական անհատականությունը երևան է գալիս ոչ միայն ստեղծագոր-

ծության նյութի, թեմայի, խնդիրների ընտրությամբ, ինչպես նաև որոշակի լեզվական միավորների նախընտրությամբ, այլև այնպիսի բազմատեսակ միջոցների կիրառմամբ, որոնք կձևավորեն ստեղծագործական երկխոսություն ընթերցողի հետ՝ վերջինիս գիտակցության մեջ որոշակի զուգորդումներ առաջացնելով» /Болотнова, 2004: 8/:

Ճանաչողական մոտեցման ներկայացուցիչները նկարագրում են հեղինակային ոճը զուգորդական-իմաստային դաշտի միջոցով, որն արտացոլվում է տեքստի իմաստային և զուգորդական կառուցվածքում: Ըստ Ն. Ս. Բոլոտնովայի՝ «գեղարվեստական տեքստի զուգորդական-իմաստային դաշտերը, առկայացված լինելով տեքստում բառերի միջոցով, ոչ միայն տեքստի վերլուծության միավոր են, այլև կարգավորիչ կառույցներ, որոնք սերտորեն կապված են տեքստն ընկալող սուբյեկտի գիտակցության մեջ առկա հասկացությունների հետ» /Болотнова, 1998: 24/:

Ի. Ա. Տարասովան, հեղինակային ոճ ասելով, հասկանում է «հասկացության մտավոր և լեզվական, ինչպես նաև ճանաչողական կառուցվածքի և դրա լեզվական արտահայտման ամբողջություն» /Тарасова, 2004/:

Մույն հոդվածի նպատակն է «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի լեզվատնական վերլուծության միջոցով վեր հանել Ջ. Ֆաուլզի հեղինակային մոտեցումը «ազատություն» գաղափարին: Ջ. Ֆաուլզը «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպում ազատության խնդրին անդրադառնում է վիկտորյանական դարաշրջանի լույսի ներքո՝ նկարագրելով հասարակության և անհատների փոխհարաբերությունը: Հեղինակն ամբողջ վիկտորյանական դարաշրջանը նկարագրում է Լայմ քաղաքում տեղի ունեցող իրադարձությունների միջոցով. վերջինս էլ անհատականության ոտնահարման, սահմանափակումների, ազատության բացակայության խորհրդանիշ է տվյալ վեպում: Վերոնշյալն ակնհայտ է դառնում հետևյալ օրինակների վերլուծության միջոցով:

Lyme was a town of sharp eyes; and this (London) was a city of the blind. No one turned and looked at him. He was almost invisible, he did not exist, and this gave him a sense of freedom, but a terrible sense, for he had in reality lost it All in his life was lost; and all reminded him that it was lost (The French Lieutenant's Woman, p. 124).

Վերոնշյալ հատվածում Ֆաուլզը Լայմ քաղաքը հակադրում է Լոնդոնին: Օգտագործելով այլաբերության տեսակներից մեկը՝ փոխանունությունը, այն է՝ “a town of sharp eyes” և “a city of the blind”, Լայմը նկարագրվում է որպես մի քաղաք, որտեղ հասարակությունը ուշի-ուշով հետևում է այնտեղ կատարվող ցանկացած իրադարձության, մինչդեռ Լոնդոնը նա պատկերում է որպես մի քաղաք, ուր իշխում է անտարբերությունը, և այլ մարդկանց ապրելաճը բնավ չի հետաքրքրում հասարակության մյուս անդամներին: Վերոնշյալ օրինակից կարելի է եզրակացնել, որ Լոնդոնում տիրող մթնոլորտը նպաստում է հերոսի մեջ ազատության զգացումի ձևավորմանը “this gave him a sense of freedom”: Սակայն հետաքրքրականն այն է, որ հաջորդիվ հեղինակը հավելում

է՝ “*but a terrible sense*”, այսինքն՝ ազատություն, որը նա երբեք չի զգացել Լայմուն ապրելու տարիներին:

Մեջբերված օրինակում ուշագրավ ոճական հնարներից է նաև հեղինակի կողմից բարձրացող աստիճանավորման օգտագործումը “*he had in reality lost it ... All in his life was lost*”, որի միջոցով Ֆաուլզը նկարագրում է ոչ միայն իր ազատության կորուստը, այլև իր ապրած ամբողջ կյանքի ապարդյուն լինելը Լայմ քաղաքում: Պատկերավորման այս միջոցը հեղինակի խոսքին հաղորդում է իմաստային ու արտահայտչական աճ և պատկերավորություն: Արտահայտչական տպավորության ուժեղացման նպատակով հեղինակը դիմում է նաև կրկնություն ոճական հնարին՝ մի քանի անգամ կրկնելով *lost, all, it* բառերը “*he had in reality lost it ... All in his life was lost; and all reminded him that it was lost*”: Վերոնշյալ բառերի կրկնությամբ հեղինակը փորձ է անում ընթերցողի ուշադրությունը սևեռել հերոսի ազատության կորստի վրա:

Mrs. Poulteney had two obsessions: or two aspects of the same obsession ... But the most abominable thing of all was that even outside her house she acknowledged no bounds to her authority (The French Lieutenant’s Woman, p. 9).

Վիկտորյանական Անգլիայի ներկայացուցիչներն էին Լայմ քաղաքի բնակիչները, որոնք նպաստում էին երկրում և մասնավորապես Լայմում ճնշող, կաշկանդող մթնոլորտի ձևավորմանը: “*She acknowledged no bounds to her authority*” փոխաբերության կիրառմամբ հեղինակը պատկերում է այդ հասարակության ներկայացուցիչներից մեկին՝ տիկին Փոլթենիին, ով սահմանափակում էր ոչ միայն իր տան բնակիչների ազատությունը, այլ իր իշխանությունը տարածում էր նաև այդ քաղաքում ապրողների վրա: Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում “*authority*” բառի վերլուծությունը, քանի որ վերջինս անգլերենում «ազատություն» հասկացության տեսականիչներից մեկն է համարվում՝ ըստ Ռոժեի թեզաորոս բառարանի /<http://thesaurus.com/browse/freedom/>: Ինչպես գիտենք, հեղինակի լեզվական անհատականության ճանաչողական մակարդակը բնութագրվում է զուգորդական-իմաստային դաշտերի համակարգի միջոցով: «Ազատություն» հասկացության իմաստային դաշտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս ունի երկակի բնույթ՝ դրական ազատություն և բացասական ազատություն: “*Authority*” բառը տվյալ համատեքստում զուգորդվում է բացասական ազատության հետ, քանի որ տիկին Փոլթենիի ազատությունը հանգեցնում է գեր-իշխանության, հասարակության մեջ ստորադաս դիրք գրավող անդամների նսեմացման և իրավունքների ոտնահարման:

Այնուամենայնիվ, հեղինակը զարգացնում է այն միտքը, որ հերոսի ազատության կորուստը պայմանավորված է ոչ միայն վիկտորյանական դարաշրջանի բռնատիրությամբ և սահմանափակումներով, այլև հենց իր՝ հերոսի թուլականությամբ, անվճռականությամբ և անհաստատականությամբ:

*And here we come near the real germ of Charles’s discontent: this feeling that he was now **the bought husband, his in-law’s puppet**. Never mind that such marriages were traditional in his class; the tradition had sprung from an age when*

polite marriage was a publicly accepted business contract that neither husband nor wife was expected to honor much beyond its terms: money for rank... From that would follow the other necessities: his gratitude for her money, this being **morally blackmailed** into a partnership ... (The French Lieutenant's Woman, p. 125).

Հետաքրքրություն է ներկայացնում *“polite marriage”* մակդրային բառակապակցությունը, որը տվյալ համատեքստում կրում է հաշվարկով ամուսնության իմաստը: *Polite* մակդիրի կիրառությամբ հեղինակը ցանկանում է ընդգծել, որ այդ ամուսնությունը հիմնված է ոչ թե սիրո և հարգանքի, այլ հասարակության կողմից ընդունված պայմանականությունների վրա: Հերոսի մտահոգության և մտատանջության պատճառն է հենց իր նմանատիպ ամուսնության պատրաստվելը բավականին հարուստ մի աղջկա՝ Էռնեստինայի հետ, ինչի արդյունքում նա ստիպված կլինի վերջնականապես կորցնել իր ազատությունը: Ֆաուլզը Չարլզի ազատության կորուստը պատկերում է *“this feeling that he was now the bought husband, his in-law's puppet”* ծավալուն փոխաբերության միջոցով, որը ցույց է տալիս հերոսի դժկամությունը դառնալ խամահիկ Էռնեստինայի հոր ձեռքերում: Վերջիվերջո, օգտագործելով *“morally blackmailed”* բառակապակցությունը, հեղինակն ընդգծում է այն փաստը, որ հաշվարկով ամուսնությունը և ֆինանսական կախվածությունը կարող են հանգեցնել բարոյական կաշկանդվածություն և պարտավորվածության:

And Ernestina, his engagement vows? But to recall them was to be a prisoner waking from a dream that he was free and trying to stand, only to be jerked down by his chains back into the black reality of his cell (The French Lieutenant's Woman, p.130).

Հերոսի տարակուսանքը, անհանգիստ հոգեվիճակը պատկերված է ներակա լեզվական մի շարք միջոցներով, որոնք առկա են մեջբերված օրինակում: Պատահական չէ Ֆաուլզի կողմից *“And Ernestina, his engagement vows?”* հռետորական հարցի ձևակերպումը, քանի որ այն ցույց է տալիս Չարլզի հոգեկան վիճակը, նրա մտորումները՝ ընտրել ազատությունը, թե հասարակական դիրքն ու կայուն ֆինանսական վիճակը: Այնուամենայնիվ, ճաշակած լինելով ազատության և իրական սիրո համը, Չարլզը Էռնեստինայի հետ ամուսնությունը գուգորդում է կապանքների, շղթաների, բանտարկության հետ, որը հեղինակն արտահայտում է *“to be jerked down by his chains back into the black reality of his cell”* ծավալուն փոխաբերության միջոցով: Հետաքրքրական է *“black reality”* մակդրային բառակապակցությունը, որը հնարավորություն է տալիս գուգորդել տիրող մթնոլորտը մռայության, մթության, խավարի հետ:

Հեղինակային ոճը «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» ստեղծագործության մեջ իր վառ արտացոլումն է գտնում Ջ. Ֆաուլզի կողմից մի շարք հեղինակային դիպվածային բառերի կիրառմամբ: Ինչպես օրինակ՝

He was trapped. He could not be, but he was. He stood for a moment against the vast pressures of his age; then felt cold, chilled to his innermost marrow by an icy rage against Mr. Freeman and Freemanism (The French Lieutenant's Woman, p. 126).

Պատահական չէ Ֆաուլզի կողմից հենց Freeman ազգանվան օգտագործումը, որը անգլերենից թարգմանաբար նշանակում է «ազատ մարդ»: Փաստորեն Freeman-ը հանդես է գալիս որպես ոճական հնար տվյալ համատեքստում, որով հեղինակը հեզնանք է արտահայտում՝ դատապարտելով հասարակության այն անդամներին, որոնք զուրկ են բարոյական սկզբունքներից, ովքեր զրկում են հասարակության մյուս անդամներին ազատությունից: Հետաքրքրություն է ներկայացնում “Freemanism” բառը, որը տվյալ ստեղծագործության մեջ հեղինակային դիպվածային բառ է, որով Ֆաուլզը վեր է հանում Չարլզի և Ֆրիմենի աշխարհընկալման, բարոյական արժեքների և սկզբունքների հակադրությունը: Ֆաուլզն այս բառով բնութագրում է վիկտորյանական դարաշրջանի այն մարդկանց, ում բնորոշ էին պարոն Ֆրիմենի մտածելակերպը, հատկանիշները, ապրելաոճը, վարքագիծը և արժեքները:

Հեղինակային մեկ այլ դիպվածային բառի կարող ենք հանդիպել ներքոհիշյալ հատվածում:

And Charles, though he wished he had not drunk so much, and so had to see everything twice over, found it delicious, gay, animated, and above all, unFreemanish (The French Lieutenant’s Woman, p. 129).

Այս համատեքստում “unFreemanish” բառը նույնպես հանդես է գալիս որպես հեղինակային դիպվածային բառ, որով Ֆաուլզը նկարագրում է այն ամենն ինչ հատուկ չէ Ֆրիմենին: Վերջինս անգութ է, անխիղճ, թույլ չի տալիս, որպեսզի մարդիկ զվարճանան, վայելեն իրենց ազատությունը, այլ խեղդում, ճնշում է մարդկանց բնական զգացմունքները՝ դարձնելով նրանց անզգա և միայն փողին ձգտող:

Հեղինակային դիպվածային բառ է նաև “demi-liberty” բառը, որն այս համատեքստում ունի «ոչ լիարժեք ազատության» իմաստը:

Thus it was that Sarah achieved a daily demi-liberty (The French Lieutenant’s woman, p. 26).

“Demi-liberty” հեղինակային դիպվածային բառը տվյալ համատեքստում արտահայտում է Ֆաուլզի ազատության ընկալումը: Ըստ նրա՝ ազատությունը կարող է նաև պայմանավորված լինել մարդկանց փոխզիջումների, փոխըմբռնման գնալու կարողությամբ:

“Freedom” բառի հոգնակի կիրառությունը նույնպես տվյալ ստեղծագործության մեջ հեղինակային դիպվածային բառ է, որի միջոցով հեղինակը շեշտում է «ազատության» կարևորությունը:

To both came the same insight: the wonderful new freedoms their age brought, how wonderful it was to be thoroughly modern young people, with a thoroughly modern sense of humor, a millennium away from... (The French Lieutenant’s woman, p. 46).

Հեղինակը “freedom” բառի կիրառմամբ, ինչպես նաև “thoroughly modern” բառակապակցության կրկնությամբ փորձում է ցույց տալ, որ նոր սերունդն ավելի անկաշկանդ և ազատ է:

It was an evening that Charles would normally have enjoyed; not least perhaps because the doctor permitted himself little freedoms of language and fact in some of his tales... (The French Lieutenant's woman, p. 63)

“Freedom” բառի հոգնակի կիրառությամբ հեղինակը տվյալ համատեքստում սաստկացնում է «ազատություն» բառի իմաստը՝ ընթերցողի ուշադրությունը գրավելով այն փաստի վրա, որ վիկտորյանական դարաշրջանում լեզվի, խոսքի ազատությունը բավականին հազվադեպ երևույթ էր:

Indeed it was hardly Sarah he now thought of—she was merely the symbol around which had accreted all his lost possibilities, his extinct freedoms, his never-to-be-taken journeys ... (The French Lieutenant's woman, p. 142)

Տվյալ օրինակում հեղինակը զարգացնում է այն միտքը, որ Սառան Չարլզի համար կորցրած ազատության խորհրդանիշն է: “Extinct freedoms” մակդրային բառակապակցությունն իր իմաստի մեջ պարունակում է «կորցրած, չիրականացած հնարավորություն» իմաստը, ինչի բացակայության մասին նա սկսել է մտածել միայն Սառայի հետ ծանոթանալուց հետո: Փաստորեն Սառան է, որ Չարլզի մեջ ինքնավստահություն և վճռականություն է ներշնչում հանուն ազատության պայքարելու համար:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի լեզվաոճական քննությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել «ազատություն» հասկացության առկայացման միջոցները Ֆաուլզի հեղինակային ոճում: Պատկերավորման մի շարք միջոցների, այլաբերությունների, հեղինակային դիալեկտիկայի բառերի վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել Ֆաուլզի հեղինակային ոճի առանձնահատկությունները: Այսպիսով, «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» ստեղծագործության մեջ հեղինակը զարգացնում է այն միտքը, որ հերոսի ազատության կորուստը պայմանավորված է ոչ միայն վիկտորյանական դարաշրջանի բռնատիրությամբ և սահմանափակումներով, այլև հենց իր՝ հերոսի թուլակամությամբ, անվճռականությամբ և անհաստատակամությամբ: Վերոնշյալը թույլ է տալիս վեր հանելու հեղինակի միտումը, ըստ որի՝ հերոսը չպետք է ենթարկվի այդ դարաշրջանի նախապաշարմունքներին ու պայմանականություններին, այլ ձգտի պայքարել անհատական ազատություն ձեռք բերելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Болотнова Н.С. Изучение идиостиля в современной коммуникативной стилистике художественного текста // *Тезисы II Международного конгресса русистов-исследователей*. Москва: МГУ, 2004 // Электр. ресурс: <http://www.philol.msu.ru/~rlc2004/ru/participants/psearch.php?pid=24087>
2. Болотнова Н.С. Об изучении ассоциативно-смысловых полей слов в художественном тексте // *Русистка: Лингвистическая парадигма*

- конца XX века: Сб. статей в честь профессора С. Г. Ильенко. Санкт-Петербург, 1998.
3. Некрасова Е.А. А. Фет, И. Анненский: Типологический аспект описания. Москва: Наука, 1991.
 4. Поцепня Д. М. Образ мира в слове писателя. Санкт-Петербург, 1997.
 5. Тарасова И.А. Категории когнитивной лингвистики в исследовании идиостиля // *Вестник Самарского государственного университета. Языкознание*, 2004 // Электр. ресурс: <http://vestnik-samgu.samsu.ru/gum/2004web1/yaz/200411601.html>
 6. Языкознание. Большой энциклопедический словарь / Под ред В.Н. Ярцевой, 2-е изд. М.: Большая Российская Энциклопедия, 2000.
 7. Fowles J. *The French Lieutenant's Woman*, 1969 // eBook scanned/proofed by Binwiped 12/02 // URL: http://gigy.weebly.com/uploads/5/9/4/4/5944278/john_fowles_the_french_lieutenants_woman.pdf

А. МАКАРЯН – Способы актуализации концепта «свобода» в идиостиле Дж. Фаулза (на материале романа «Любовница французского лейтенанта»).

– Целью данной работы является изучение способов актуализации концепта «свобода» в идиостиле Дж. Фаулза на материале анализа романа «Любовница французского лейтенанта». Лингвостилистический анализ романа позволяет выявить ряд используемых автором стилистических приемов, тропов и окказионализмов, которые выявляют особенности идиостиля Дж. Фаулза. Концепт «свобода» вербализуется в романе с помощью эксплицитных и имплицитных языковых средств, способствующих актуализации авторской концепции понятия «индивидуальная свобода».

Ключевые слова: идиостиль, ассоциативно-смысловое поле, концепт, стилистические приемы, окказионализмы, индивидуальная свобода, викторианская эпоха

A. MAKARYAN – Means of Actualization of the Concept of “Freedom” in the Individual Style of John Fowles (based on the Novel “The French Lieutenant’s Woman”).

– The present paper aims at studying the concept “freedom” in J. Fowles’ individual style based on the analysis of the novel “The French Lieutenant’s Woman”. The linguo-stylistic analysis of the novel makes it possible to single out a number of stylistic devices – tropes and nonce-words – underlying the concept of “freedom”, which reveal the peculiarities of J. Fowles’ individual style. The concept of “freedom” is verbalized in the novel by various explicit and implicit language means which disclose the author’s individual perception and interpretation of the concept of “freedom”.

Key words: individual style, associative-semantic field, concept, stylistic devices, nonce-words, freedom, Victorian Age